«Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն»
Իրավաբանական անձանց միություն

"Union of Canned Food and Juice Producers of Armenia"
Union of legal entities

ՀՊՀՄ ՍՊԿՍ UCFJPA

ՀՀ, 0028, Երևան, Օրբելի 31, Հեռ.՝ (010) 420515, e-mail: info@ucfjpa.am

31str. Orbeli, 0028 Yerevan, RA,Tel.:(+37410) 420515, e-mail:info@ucfjpa.am

No 017

« 02 » մայիս 2016 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Նախագահ Երվանդ Թարվերդյանից
ՀՀ, ք.Երևան, Օրբելի փող., տուն 31
Հեռ: +37410 420 515
info_prim@ucfjpa.am

Հայաստանի պահածոյագործների և
հյութ արտադրողների միություն ԻԱՄ
Պետական գրանցման համար – 211.150.801235

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ **«Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն»** ԻԱՄ-ն ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը.
2. Կազմակերպության լիազորված անձի անձնագրի պատճենը.
3. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ
4. Հետաքրքրվածության նամակ
5. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դիմող՝ Երվանդ Թարվերդյան

ՀՊՀՄ ՍՊԿՍ UCFJPA 00130973

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
03 05 2016
Մուտք N 1/1/5122-16

Կազմված է 14.12.2013թ.
Տպագրված է 2 օրինակից

Օրինակ 1.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀԱԾՈՅԱԳՈՐԾՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒԹ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ հիմնադիր ժողովի 2013թ. դեկտեմբերի 14-ին կայացրած որոշմամբ (արձանագրություն թիվ 1)

Միության նախագահ և տնօրեն

Երվանդ Թարվերդյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«25» 02 2014թ.
գրանցման համար 211.150, 801235
վկայական 0316-951235
հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00130973

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀԱԾՈՅԱԳՈՐԾՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒԹ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2013

«Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն»
Իրավաբանական անձանց միություն

"Union of Canned Food and Juice Producers of Armenia"
Union of legal entities

ՀՀ, 0028, Երևան, Օրբելի 31, Հեռ.՝ (010) 420515, e-mail: info@ucfjpa.am

31str. Orbeli, 0028 Yerevan, RA,Tel.:(+37410) 420515, e-mail:info@ucfjpa.am

No 017

« 02 » մայիս 2016թ.

Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դեռևս Խորհրդային Միության տարիներից Հայաստանի ագրովերամշակման ոլորտը հանդիսացել է մեր երկրի տնտեսության զարգացման առաջնային ճյուղերից, ինչպես նաև արտաքին շուկաներում Հայաստանի հարաբերական առավելություն ապահովող կարևորագույն բնագավառներից մեկը: Հայաստանի ագրովերամշակող արդյունաբերությունը նպաստում է պարենային և ագրոպարենային շուկայի ձևավորմանը, ինչպես նաև ապահովում է ազգաբնակչությանն անվտանգ, որակյալ մթերքների երաշխավորված ու կայուն մատակարարումը:

Ոլորտը ներառում է ՀՀ կառավարության կողմից թիրախային ընտրված և գերակա նշանակության ունեցող արդյունաբերության 11 ճյուղերից 3-ը՝

- բնական հյութերի արտադրություն,
- պահածոների արտադրություն,
- գյուղմթերքի վերամշակում:

Վերլուծելով ոլորտում առկա վիճակը, արտադրության և արտահանման ծավալները և անդրադառնալով դեռևս Խորհրդային Միության ժամանակաշրջանում Հայաստանում պտղաբանջարեղենի վերամշակման ոլորտին, երբ Հայաստանի կողմից արտադրվել է մի քանի անգամ ավել արտադրատեսակ, կարելի է արձանագրել, որ առկա է ոլորտի զարգացման մեծ ներուժ: Ներկայումս հանրապետության գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում գործող ձեռնարկություններն իրենց առջև խնդիր են դրել բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու թողարկվող արտադրանքի մրցունակությունը և դիվերսիֆիկացնել արտադրությունը: Վերջին տարիներին մասնավոր հատվածի լրացուցիչ ներդրումների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, զգալիորեն բարելավվել է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության վիճակը:

Որոշ զարգացող ընկերություններ հաջողությամբ մրցակցում են ինչպես ներքին և ԱՊՀ անդամ երկրների, այնպես էլ միջազգային պարենային շուկաներում և ներդրումներ են կատարում արտադրության հետագա զարգացման համար: Վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտահանման ծավալների աստիճանական ավելացումը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը: Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 1600 սննդամթերքի արտադրության ձեռնարկություններ, որոնցից շուրջ 35 ձեռնարկություն զբաղվում է պտուղբանջարեղենի վերամշակմամբ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումների շնորհիվ օրեցոր կատարելագործվում են ձեռնարկությունների և գյուղացիական տնտեսությունների համագործակցության որակը և մեխանիզմները: Ձեռնարկություն-գյուղացի հարաբերությունները կատարելագործվելով տեղափոխվում են պայմանագրային դաշտ՝ կողմերի համար սահմանելով հստակ իրավունքներ և պարտականություններ: Պայմանագրային փոխհարաբերությունները խորացնելու նպատակով դեռևս 2011 թ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել ու հանրապետության մթերում իրականացնող ընկերություններին են տրամադրվել բերքի գնման պայմանագրերի օրինակելի ձևերը: 2013 թվականից առավել կայունացել է վերամշակող ընկերությունների և գյուղացիական տնտեսությունների միջև մինչև մթերումների սկսվելը գյուղատնտեսական հումքի գնումների պայմանագրերի կնքման գործընթացը: 2013 թվականին հանրապետության պտուղբանջարեղեն վերամշակող ընկերությունների և գյուղացիական տնտեսությունների միջև կնքվել է 9331 պայմանգիր, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 35.3%-ով:

Զգալիորեն ավելացել և չափազանց բազմազան է դարձել մթերվող բանջարեղենի ու պտղի տեսականին: Մթերվում է հանրապետությունում աճող բանջարեղենի, պտղի ու հատապտղի գրեթե ողջ տեսականին: 2013 թվականի պտուղբանջարեղենի մթերման ծավալները 2012 թվականի համեմատ աճել են 3.7 տոկոսով և կազմել 56.8 հազ. տոննա պտուղբանջարեղեն: Բարձրացել են նաև մթերման միջին գները: 2013 թվականին արձանագրվել է նաև մթերվող պտուղբանջարեղենի դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների գործընթացի բարելավում: 2014 թվականին կնքված պայմանագրերի թիվը հասել է շուրջ 12.000, որը 20 տոկոսով ավելին է նախորդ տարվա ցուցանիշից: Պայմանագրերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 112,5 մլն դրամ կանխավճար և 675,1 մլն դրամի բուժանյութեր, պարարտանյութ և այլ օժանդակ նյութեր: Մյուս ընկերությունները պայմանագրեր են կնքել մթերումների ընթացքում:

Միջոցառումներ են իրականացվել պետություն-մասնավոր հատված համագործակցությունը զարգացնելու և խորացնելու ուղղությամբ: Գյուղատնտեսական հումքի մթերումների գործընթացը կազմակերպված իրականացնելու, ինչպես նաև ագրովերամշակման ոլորտների բնականոն գործունեությունն ու զարգացումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի և կաթնամթերքի, գինեգործության ու պտուղբանջարեղենային պահածոների արտադրության և այդ ոլորտներում գործող հասարակական կազմակերպությունների, իրավաբանական անձանց միությունների, գիտակրթական, կրթական ու հետազոտական հաստատությունների ներկայացուցիչների միջև ստորագրվել են համագործակցության

վերաբերյալ հուշագրեր: Ստեղծվել են Հայկական կոնյակագործների, կաթնամթերք արտադրողների իրավաբանական անձանց միությունները: Իսկ 2013 թվականի օգոստոսի 21-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ կայացավ Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միության հիմնադիր ընդհանուր ժողովը, որի արդյունքում ստորագրվեց միության հիմնադիր պայմանգիրը և ընտրվեց միության նախագահ:

Զգալիորեն ավելացել են ոլորտի զարգացմանն ուղղված պետական աջակցության միջոցառումները: Մասնավորապես, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության զարգացման ռազմավարությանը և ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման մեջ լրացում կատարելու, ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության նախագծերը: Բացի այդ, ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության առաջնային ոլորտների շարքում, բացի կոնյակագործության և գինեգործության ոլորտից, ընդգրկվել են նաև պտուղբանջարեղենային պահածոների, հյութերի և հանքային ջրերի արտադրության ոլորտները և մշակվել է Հայաստանի հյութերի և պահածոների արտադրության ոլորտների զարգացման ռազմավարությունը, ինչպես նաև ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրումը ու դրանց տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորումը: Ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգի նախագծով առաջարկվել է 4 տոկոսային կետով սուբսիդավորել վերամշակող ընկերություններին պտուղբանջարեղենի, թարմ հատիկաընդեղենի և խաղողի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տրամադրվող վարկերի մայր գումարի առավելագույն չափը պետք է չգերազանցի հայտին կից ներկայացվող ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հաստատված Բերքի գնման պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան գյուղացիական տնտեսությունների հետ կնքված պայմանագրերում նշված բերքի գնման ակնկալվող արժեքը (պայմանագրերում նշված գնման նվազագույն գներով հաշվարկված): Վարկի մարման առավելագույն ժամկետը սահմանվում է 3 տարի: Վարկի նախապայմաններից է նաև ստացված վարկի 40 տոկոսը գյուղացիական տնտեսությանը կանխավճարի տեսքով (դրամային և/կամ գույքային) տրամադրելու պարտավորությունը, որն ամրագրվում է առանձին գյուղացիական տնտեսությունների հետ կնքված բերքի գնման պայմանագրերում, հաշվարկվում է ելնելով պայմանագրում նշված բերքի գնման ակնկալվող արժեքից (գնման նվազագույն գնով հաշվարկված) և մարվելու (հաշվանցվելու) է բերքի գնման ժամանակ:

Գյուղատնտեսական մթերքների իրացման աջակցության ուղղությամբ ձեռնարկվում են շարունակական միջոցառումներ: Մասնավորապես՝ յուրաքանչյուր տարի իրականացվում է հաջորդ տարվա մթերման և արտահանման նախապատրաստական աշխատանքներ, կատարվում են պտուղբանջարեղենի մթերումների, թարմ պտուղբանջարեղենի արտահանումների կանխատեսվող ծավալների մոնիթորինգ, վերամշակող ընկերությունների կողմից մթերումների իրականացման նպատակով անհրաժեշտ փոխառու շրջանառու միջոցների պահանջարկի

մոնիթորինգ: Մթերումների գործընթացի կանոնակարգման նպատակով պտուղբանջարեղենի մթերման կանխատեսվող ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ՀՀ մարզպետարաններին և նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին՝ մարզի գյուղացիական տնտեսություններին տեղեկացնելու, վերջիններիս ու վերամշակող ընկերությունների միջև հումքի գնման պայմանագրերի կնքման գործընթացի հարցում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Ներկայումս մշակվել և քննարկման փուլում է գտնվում ոլորտի զարգացման ռազմավարական ծրագիրը: Կարծում ենք, որ ծրագրի հաստատումը էլ ավելի կմեծացնի ոլորտում օտարերկրյա ներդրողների հետաքրքրությունը և ներգրավման հնարավորությունը:

Հաշվի առնելով այն փաստը, որ պահածոյագործությունը բավականին զարգացած է Հայաստանում և Եվրասիական Տնտեսական Միությանը անդամակցությունը կանխատեսում է Հայկական ձեռնարկությունների կողմից այդ շուկաներում արտադրանքի անմիջական սպառման հնարավորություն, կարծում ենք, որ նորաստեղծ միության ողջ ներուժը կարող է խթան հանդիսանալ ոլորտի զարգացման համար: Այդ նպատակով մեծածավալ աշխատանքներ են իրականացվում Հայաստանի Եվրասիական տնտեսական միության անդամակցությունից բխող լրացուցիչ գործառույթների, մասնավորապես օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման ուղղությամբ, որը ևս կնպաստի ԵՏՄ-ի հետ արագ ինտեգրմանը, կբարձրացնի վստահությունը Հայաստանում արտադրվող սննդամթերքի որակի և անվտանգության նկատմամբ և լրջորեն կխթանի արտադրության և արտահանման ծավալների ավելացումը:

ՀՀ կառավարության համապատասխան ստորաբաժանումները ձեռնարկություններին աջակցում են նոր արտահանման շուկաներ գտնելու գործընթացում: Արտահանման ծավալների աճը իր հերթին կբերի լրացուցիչ աշխատուժի ներդրման անհրաժեշտություն: Կստեղծվեն աշխատատեղեր՝ հնարավորինս լուծելով մեր երկրում առկա զբաղվածության գերխնդիրը:

Առջևում ունենալով ոլորտի զարգացման կայուն ծրագիր, գնահատելով առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր եղանակները, կարծում ենք մոտ ապագայում ագրովերամշակման ոլորտի զարգացման ցանկալի արդյունքը տեսանելի կլինի բոլորիս համար: Այս արդյունքի հստակ դրսևորումը կլինեն հայ գյուղացու կենսամակարդակի բարելավումը, հանրապետության գյուղական բնակավայրերում աղքատության հաղթահարումը, ինչպես նաև Հայաստանում վերամշակման բնագավառի աշխատողների համար կայուն և արժանավայել աշխատանքի ապահովումը, այդպիսով վերահաստատելով ագրովերամշակման ոլորտը որպես Հայաստանի կայուն տնտեսական զարգացման համար հիմնական բնագավառներից մեկը:

Նախագահ Ե.Թարվերդյան

«Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն»
Իրավաբանական անձանց միություն

"Union of Canned Food and Juice Producers of Armenia"
Union of legal entities

ՀՊՀՄ ՍՊԿՀ UCFJPA

ՀՀ, 0028, Երևան, Օրբելի 31, հեռ.՝ (010) 420515, e-mail: info@ucfjpa.am

31str. Orbeli, 0028 Yerevan, RA,Tel.:(+37410) 420515, e-mail:info@ucfjpa.am

No 017

« 02 » մայիս 2016 թ.

Տեղեկանք
Վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

«Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն» իրավաբանական անձանց միությունը արդեն երկու տարի է ակտիվ գործունեություն է ծավալում հյութերի և պահածոների արտադրության, ինչպես նաև պտուղբանջարեղենի վերամշակման ոլորտում:

Միությունը ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է նպաստելու ՀՀ տարածքում պահածոյագործության և հյութերի արտադրության ու իրացման ոլորտում գործող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությանը, ինչպես նաև ներկայացնելու և պաշտպանելու նրանց գույքային շահերը: Դեռևս 2013թ. օգոստոսի 21-ին ՀՀ Գյուղատնտեսության նախարարի մոտ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ վերամշակման ոլորտի 26 ընկերություններ և Հայաստանի ազգային ագրարային համալսարանը ստորագրել են միության կազմում ներգրավվելու պայմանագիրը, հաստատել են Միության կանոնադրությունը և բաց քվեարկությամբ ընտրել միության նախագահին:

Ստեղծման առաջին իսկ օրվանից Միությունը իր գործունեությունը ուղղել է ոլորտի խնդիրների վերհանմանը և լուծմանը: Նորաստեղծ միության նպատակները վերաբերում էին ինչպես պտուղ-բանջարեղենային պահածոների, հյութերի որակի և անվտանգության ապահովմանը, նպատակային շուկաներում համատեղ ջանքերով հայկական արտադրանքի վարկանիշի բարձրացմանը, այնպես էլ ոլորտի օրենսդրության բարելավմանը, միջազգային մասնագիտացված ցուցահանդեսների, գիտաժողովների և ֆորումների մասնակցությանը:

Այդ նպատակով նորաստեղծ Միության նախագահը 2014թ. փետրվարի 18-ին ՀՀ վարչապետի մոտ Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միության անդամների հետ հանդիպման ժամանակ ներկայացրել է առաջարկություններ ոլորտի զարգացման, ինչպես նաև պետական մասնակցությամբ համատեղ ձեռնարկություն ստեղծելու հնարավորության և դրա նպատակահարմարության վերաբերյալ:

Առաջարկվել է մանկական սննդի արտադրության զարգացման նպատակով որպես հիմնական ուղղություն ընտրել ծիրանի և դեղձի խտանյութի արտադրությունը, գնահատել արտադրանքի իրատեսական ծավալները, արտաքին շուկայում մրցունակ դիտարկվելու համար պահանջվող չափանիշները և նորմերը: Միաժամանակ քննարկումներ են իրականացվել միության անդամ առանձին ձեռնարկությունների հետ, ուսումնասիրվել են վերջիններիս տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները:

Ոլորտի խնդիրների վերհանմանն ուղղված գործունեության շրջանակներում Միությունը ներկայացրել է տեղեկանք բանջարեղենային և մրգային խյուսի, պահածոների, ինչպես նաև մրգահյութերի արտադրությամբ զբաղվող ձեռնարկություններին աջակցության անհրաժեշտության և դրանց հնարավոր եղանակների մասին: Միության նախագահը հայտնել է, որ ներկայումս ՀՀ տարածքում գործում է մրգային և բանջարեղենային պահածոներ և մրգահյութեր արտադրող մոտ 40 ընկերություն, որոնք հիմնականում աշխատում են թերի ծանրաբեռնվածությամբ: Որպես այդպիսի աշխատանքի հիմնական պատճառներ նշվել են շրջանառու միջոցների պակասը, ոչ բավարար առաջնային հումքը՝ տեխնիկական միրգ, հատապտուղներ, բանջարեղեն և արտադրանքի սպառման փոքր ծավալները:

Տեղեկանքը ներառել է ինչպես վերոնշյալ պատճառները, այնպես էլ դրանց լուծման եղանակները: Միության նախագահը առաջարկներ է ներկայացրել նաև գյուղմթերքի արտադրության և արտահանման խրախուսման լրացուցիչ միջոցառումների ձեռնարկման վերաբերյալ: Մասնավորապես նշվել է, որ մրգերի, հատապտուղների և բանջարեղենի վերամշակման, բանջարեղենային պահածոների արտադրության ծավալների ավելացման, ինչպես նաև դրանց արտահանման կազմակերպման հետ կապված առաջարկվում է կատարել հետևյալ միջոցառումները՝ մշակել մեծ պահանջարկ ունեցող արտադրատեսակների ցանկ, հաստատել ապրանքների արտադրության համընդհանուր տեխնիկական պայմաններ, հայտարարել մրցույթ և ստեղծել համընդհանուր դիզայն ապրանքների փաթեթավորման համար, ստեղծել որակի վերահսկման մեխանիզմներ, այդ թվում՝ ստեղծել որակի վերահսկման լաբորատորիա, վերամշակող ընկերությունների հետ անցկացնել քննարկում՝ միևնույն ապրանքային նշանի ներքո, միևնույն տեխնիկական պայմաններով «Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միության» կողմից արտադրանքի որակի մշտական վերահսկողության ներքո ապրանքների արտադրության հնարավորության և գործընթացին մասնակցության ցանկության վերաբերյալ:

Միության գործունեությունը ընդգրկում է ՀՀ կառավարության կողմից թիրախային ընտրված և գերակա նշանակություն ունեցող արդյունաբերության 11 ճյուղերից 3-ը՝ բնական հյութերի արտադրությունը, պահածոների արտադրությունը, գյուղմթերքի վերամշակումը:

Միության համար բավականին կարևորություն ունի համագործակցությունը աշխարհի տարբեր ծայրերում գործող նմանատիպ կազմակերպությունների հետ: Այս տեսակ համագործակցությունը հնարավորություն կտա փոխանակել տարբեր երկրների փորձը և ձեռք բերել հետագա զարգացման նոր հնարավորություններ: Այդ նպատակով բանակցություններ են վարվում Լիտվայի գյուղատնտեսության և սննդի շուկայի վերահսկման իրականացման նպատակով ստեղծված պետական գործակալության հետ:

Նշանակալի է նաև այն փաստը, որ 2015թ. հունվարի 1-ից Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միությունը հանդիսանում է Հյութ արտադրողների միջազգային միության անդամ: 2014թ. հոկտեմբերի 14-ին Բելգիայի Անտվերպ քաղաքում տեղի ունեցավ Հյութ արտադրողների միջազգային միության Ընդհանուր ժողովը: Երկարատև բանակցությունների ընթացքում Միությանը ներկայացված փաստաթղթերի հիման վրա վերջինիս կողմից որոշում կայացվեց ներգրավել Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միությունը Միջազգային միության կազմում:

Համագործակցության հուշագիր է ստորագրվել Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի և Հայաստանի Պահածոյագործների և Հյութ Արտադրողների Միության միջև:

Հուշագրի շրջանակներում Միությունը կաջակցի ՀԱԱՀ ուսանողներին անցնել արտադրական պրակտիկա Միության անդամ ձեռնարկություններում:

Միության ստեղծման նպատակներից էր հանդիսանում նաև միջազգային ցուցահանդեսներին մասնակցությունը: Այդ նպատակով 2015թ. Մոսկայում կայանալիք ProdExpo ամենամյա ցուցահանդեսին հայկական ձեռնարկությունների մեկ միասնական տաղավարով մասնակցությունը կազմակերպելու հարցում Միությունը համագործակցել է Զարգացման հայկական գործակալության հետ:

Հավատարիմ մնալով իր նպատակներին, Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միությունը կշարունակի իր ակտիվ գործունեությունը ագրովերամշակման ոլորտում, կներգրավվի նոր անդամներ, համագործակցություն կհաստատի այլ միջազգային նշանակության կազմակերպությունների և միությունների հետ այդպիսով խթանելով և՛ Միության, և՛ ոլորտի զարգացմանը:

Նախագահ՝ Ե.Թարվերդյան

«Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն»
Իրավաբանական անձանց միություն

"Union of Canned Food and Juice Producers of Armenia"
Union of legal entities

ՀՊՀՄ СПКСА UCFJPA

ՀՀ, 0028, Երևան, Օրբելի 31, Հեռ.՝ (010) 420515, e-mail: info@ucfjpa.am

31str. Orbeli, 0028 Yerevan, RA,Tel.:(+37410) 420515, e-mail:info@ucfjpa.am

No 017

« 02 » նոյեմբեր 2016 թ.

ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ պարոն
Սերգո Կարապետյանին

Հարգելի՛ պարոն Կարապետյան,

Հանդիսանալով Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միության նախագահ՝ ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միությունը ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ներգրավելու հարցին:

Միության ստեղծումը նպատակ ունի աջակցել յուրաքանչյուր արտադրողի համար բավականին մեծ կարևորություն ներկայացնող պահածոյագործության և հյութերի արտադրության ու իրացման, արտահանման նոր շուկաների բացահայտման խնդրին, այդ շուկաներ մուտք գործելու հետ կապված խոչընդոտների բացահայտմանը:

ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհուրդը ՀՀ Գյուղատնտեսության նախարարության ներքո ստեղծված կառույց է, որը սերտորեն կապված է գյուղատնտեսության բոլոր ոլորտներին, ունի հստակ պատկեր խնդիրների և զարգացման հեռանկարների վերաբերյալ: Կառույց, որտեղ վեր կհանվեն գյուղատնտեսության կարևորագույն խնդիրները, կլսվեն ոլորտի ներկայացուցիչների առաջարկություններն ու կարծիքները, համատեղ ուժերով զարկ կտրվի գյուղատնտեսության դինամիկ զարգացմանը:

Գյուղացիական տնտեսությունների հետ ակտիվ համագործակցության մեջ գտնվող մասնակիցների ներգրավումը կնպաստի հասարակական խորհրդի նպատակների և առաջադրված աշխատանքների արդյունավետ կերպով իրականացմանը:

Այսպիսով, Միությունը դիմում է հասարակական խորհրդի կազմում ներգրավվելու համար, քանի որ կարծում ենք, որ մեր և միության անդամների պրոֆեսիոնալ կազմի համատեղ ջանքերի շնորհիվ սեղմ ժամկետներում կտրվի լուծում ոլորտի կարևորագույն խնդիրներին:

Նախագահ Ե.Թարվերդյան

ՀՊՀՄ СПКСА UCFJPA 00130973